


Բառային միավորների հավելումը և բացթողումը Վ. Պիկուլի «Ֆավորիտ» վեպի հայերեն թարգմանության մեջ

Ծառուրյան Լիլիթ Հ.

ասպիրանտ, Հայոց լեզվի ամբիոն, Հայ բանասիրության ֆակուլտետ, Երևանի պետական համալսարան (Երևան, ՀՀ)

 <https://orcid.org/0009-0003-1457-1293>
tsaturyan-1997lilit@mail.ru

ՀՏԳ՝ 81`25; EDN: QFBYCW

DOI: 10.58587/18292437-2025.1-125

Հանգուցաբառեր և բառակապակցություններ՝ հավելում, բացթողում, բնագիր, տեքստի ծավալ, ռճական առանձնահատկություն, փոխարինում, բառապաշար, համատեքստ, համարժեք

Добавление и опущение словесных единиц в армянском переводе романа В. Пикуля «Фаворит»

Цатурян Лилит А.

аспирант кафедры армянского языка, факультет армянской филологии, Ереванский государственный университет (Ереван, РА)

Аннотация. Опушения и дополнения неизбежны в результате трансформации, происходящих в процессе перевода. В некоторых случаях их использование может быть неоправданным, и задачей переводчика становится добавление или опущение слова или фразы, когда это неизбежно или делается с определенной целью. Можно сделать вывод, что в армянском переводе романа «Фаворит» переводчик, стремясь приблизиться к исходному тексту, иногда делал ненужные дополнения, возможно, потому, что без них контекст перевода может быть непонятен. Именно поэтому в армянском переводе романа больше добавлений, чем пропусков.

Ключевые слова и словосочетания: добавление, опущение, подлинник, объём текста, стилистический признак, замена, лексика, контекст, эквивалент

Addition and ellipsis of lexical units in armenian translation of V. Pikul's novel "The favorite"

Tsaturyan Lilit H.

Post-graduate student of faculty of Armenian philology, Yerevan State University (Yerevan, RA)

Abstract. Omissions and are inevitable as a result of the transformations that occur during the translation process. In some cases their use may be unjustified and the translator's task becomes to add or omit a word or phrase when it is unavoidable or done for a specific purpose. In conclusion the translator trying to get closer to the original text in the Armenian translation of the novel "The Favorite" sometimes made unnecessary additions, perhaps because without them the context of the translation may be unclear. That is why there are more additions than omissions in the Armenian translation of the novel.

Keywords & phrases: addition, ellipsis, original, text volume, stylistic feature, substitution, vocabulary, context, equivalent

Թարգմանության ռազմավարության հիմնական սկզբունքները ներառում են մի շարք տեխնիկական հնարքներ, որոնք խախտում են թարգմանության ձևային նմանությունը բնօրինակին, բայց ապահովում են ավելի բարձր մակարդակի համարժեքություն: Այս տեխնիկաներից թարգմանության գործընթացում ամենից լայն տարածում ունեն բառային միավորների հավելումը և բացթողումը: Քերականական իրողությունների բառային փոխարինումների դեպքում հաճախ ենք հանդիպում բացթողումների: Դրանք հիմնականում լինում են այն դեպքերում, երբ բնագրի բառակապակցությանը/նախադասությանը թարգմանության լեզ-

վում համապատասխանում է բառ, կամ երբ որևէ բառ/բառակապակցություն ավելորդաբանություն է թարգմանության լեզվում, այսինքն՝ տվյալ բառի արտահայտած իմաստը կարելի է քաղել տեքստից առանց այդ բառի [1, էջ 142]: Նույն կերպ, երբ թարգմանությունն ընթերցողների ֆոնային գիտելիքները բավարար չեն տեքստը հասկանալու համար, կամ երբ բնագրի լեզվի բառին թարգմանության լեզվում համապատասխանում է բառակապակցություն/նախադասություն, կատարվում են հավելումներ [6, էջ 113]: Բնագրում չարտահայտված և ակնարկվող իմաստային շատ տարրեր պետք է արտահայտվեն թարգմանության մեջ լրացուցիչ

բառային միավորների միջոցով: Այդ տարրերի անուղղակի ըմբռնումը պահանջում է ընթերցողից ծանոթ լինել օտար լեզվով տեղեկատվության կազմակերպման ընդհանուր ընդունված եղանակներին կամ հատուկ «ֆոնային» գիտելիքներին: Ընթերցողը նման գիտելիքներ չունի օտար լեզվով տեքստերի իմաստային հատկանիշների մասին, և նրա համար ենթադրյալ իմաստը պետք է բացահայտի թարգմանիչը [2, էջ 201]:

Բառային միավորների բացթողումների և հավելումների դրսևորումները կներկայացնենք Վ. Պիկուլի «Ֆավորիտ» վեպի հայերեն թարգմանության օրինակով՝ վերլուծելով, թե թարգմանիչը՝ Վ. Վարդանյանը, որ դեպքերում և ինչ պատճառներով է կիրառել դրանք:

Բառային հավելումները կարող են պայմանավորված լինել բնագրում քերականական միջոցներով արտահայտված իմաստները թարգմանության տեքստում մեկից ավելի բառերով փոխանցելու անհրաժեշտությամբ: Այսպես՝ ռուսերենում գոյականը և դերանունը ունեն սեռի քերականական կարգ, որը ձևաբանական կարգ է և բացակայում է հայերենում: Այն դեպքում, երբ համատեքստը պահանջում է սեռային տարբերակում մտցնել, սեռանիշ դերանունները կարող են թարգմանվել այլ բառային միջոցներով, օրինակ՝ հատուկ անուններով կամ համապատասխան գոյականներով [6, էջ 126]: Այսպես՝ ստորև բերված օրինակներում թարգմանիչը սեռային տարբերակում մտցնելու համար ավելացրել է համարժեք գոյականները մի դեպքում փակագծում, մյուս դեպքում՝ բառի կողքին.

Екатерине не суждено было узнать, что Вольтер поместил её портрет в Фернее между портретом прачки, стиравшей ему белье, и портретом угольщика, озабоченного согреванием его старческих костей [4, т. 1, ст. 400-401]. – *Եկատերինային վիճակված չէր իմանալ, որ Վոլտերը Ֆերնեյում նրա (կայսրուհու) դիմանկարը կախել է իր (Վոլտերի) սպիտակեղենը լվացող լվացարարուհու և իր ծերունական ուկրոները տարածելով մտահոգված ածխագործի դիմանկարի միջև* [5, հ. 1, էջ 526]:

Хоры русских волжанок соперничали с капеллою украинских бандуристов [4, т. 2, ст. 322]. – *Վոլգացի ռուս կանանց երգչախմբերը մրցակցում էին ուկրաինական բանդուրիստների կապելլայի հետ* [5, հ. 2, էջ 424]:

Կամ որոշակիություն արտահայտելու համար ավելացրել է մարդ բառը.

Зима трещала за окнами – морозная, солнечная, снегу навалило – душа радовалась [4, т. 1, ст. 87]. – *Զրույն ճարճքան ձմեռ էր՝ ցուրտ, արևոտ, ձյունառատ. մարդու հոգին խնդում էր* [5, հ. 1, էջ 103]:

Երբեմն ռուսերենի բայի եղանակաժամանակային ձևը հայերենում մեկ բայաձևով հնարավոր չի լինում արտահայտել, ուստի այստեղ թարգմանիչը պետք կատարի հավելումներ, ռուսերենի միաբաղադրիչ բայը փոխարինի հարադիր, գուգադիր կամ միաժամանակ մի քանի բայերով:

Я тут стараюсь, в Европах этих разных все пороги обила, невесту для тебя сыскивая... [4, т. 1, ст. 37] – *Ես այստեղ տանջվում-չարչարվում եմ, այդ զանազան եվրոպայիներում բոլոր շեներն եմ մաշել՝ քեզ համար հարսնացու փնտրելով...* [5, հ. 1, էջ 36-37]:

Зимою маменька навестила сынка в Москве... [4, т. 1, ст. 87] – *Չմռանը մայրը գնաց Մոսկվա, այցելեց որդուն...* [5, հ. 1, էջ 102]:

Вильбоа, услышав такое, принал к её руке [4, т. 1, ст. 128]. – *Այս լսելով՝ Վիլբուան խոնարհվեց ու շուրթերը հպեց թագուհու ձեռքին* [5, հ. 1, էջ 157]:

Վերը բերված օրինակներում անհրաժեշտություն է առաջացել բնագրի դիմավոր բայը/դերբայը հարադիր բայով կամ բացատրական՝ մի քանի բայով թարգմանելու, քանի որ, օրինակ, *припасть* բայը և՛ խոնարհվելու, և՛ փարվելու, իսկ տեքստում հավելու, ձեռքը համբուրելու իմաստներն ունի, ուստի թարգմանիչը դիմել է հավելումների, այդ թվում ավելացնելով *շուրթերը* բառը, քանի որ ավելի հավանական է, որ ձեռքին հենց շուրթերը հպվեն: Մինչդեռ ... *за царницей, будто побитая собака, тащилась рыдающая «королева»* [4, т. 1, ст. 50]. – ... *թագուհու ետևից, ծեծված շան նման, քարշ գալով գալիս էր հեկեկացող «թագուհին»* [5, հ. 1, էջ 53]: օրինակում թարգմանիչը կարող էր խուսափել ավելորդարանությունից՝ *գալ* բայը երկու անգամ չկիրառելով (*քարշ գալով գալիս էր*):

Երբեմն հավելումները պայմանավորված են գուտ ոճական նկատառումներով կամ թարգմանության լեզվի առանձնահատկություններով, և թարգմանիչը որոշ դեպքերում կարող է դիմել հավելումների կամ առանց դրանց կատարել թարգմանությունը.

Екатерина нагнулась из кресел и поцеловала артиллериста в лоб [4, т. 1, ст. 128]. – *Եկատերինան քաղկաթոռի մեջ նստած կռացավ ու համբուրեց հրետանավորի ճակատը* [5, հ. 1, էջ 157-158]:

Այս օրինակում եթե թարգմանիչը հավելում չաներ և կատարեր բառացի թարգմանություն, հայերենում իմաստը ճիշտ չէր հաղորդվի՝ *քաղկաթոռից կռացավ*, քանի որ բնագրում նկատի ունի, որ Եկատերինան քաղկաթոռին էր նստած և նստած տեղից է համբուրում: Վեպի հայերեն թարգմանության մեջ այսպիսի օրինակների կարելի է հանդիպել, երբ կարիք կա բնագրի ոճական, հուզական կամ հեգնական իմաստը

հաղորդելու համար կատարել հավելումներ կամ բացթողումներ, օրինակ՝

- *Почитаешь их, так у нас все мерзко...* [4, т. 2, ст. 11] – *Մրանց գրածներին որ նայես՝ մեզ մոտ ամեն ինչ զարշելի է...* [5, հ. 2, էջ 14]:

Ռուսերենի *почитать* բառը նշանակում է *մի քիչ կարդալ, ինչ-որ բան թերթել, նայել*, հայերեն թարգմանությունը՝ *գրածներին որ նայես*, հաղորդում է նաև բնագրի հեզնական իմաստը: Հավելում կարելի է չկատարել այն դեպքում, երբ առանց դրա հասկացվում է տեքստի իմաստը: Այսպես՝ *В ответ на упреки в крохоборстве оправдывалась* [4, т. 2, ст. 481]. – *Նոստրոսյան համար արված կշտանքանքներին պատասխանելով՝ նա արդարանում էր* [5, հ. 2, էջ 633]: օրինակում թարգմանիչը կարող էր չկատարել դերանվան հավելում, քանի որ հայերենում նույնպես դիմավոր բայից կարելի է հասկանալ գործողությունը կատարողի դեմքը: Դերանունների հավելումը արդարացված է այն դեպքում, երբ հայերեն թարգմանության մեջ շարադասությունը և նախադասության կառուցվածքը խախտում են բնագրի իմաստային կողմը, կամ անհրաժեշտություն է առաջանում ընդգծելու գործողությունը կատարողին:

Навстречу придворным каретам спешили саночки с петербургжцами, желавшими видеть каменный колосс... [4, т. 1, ст. 402] – *Արքունական կառքերին ընդառաջ էին շտապում պետերբուրգցիներով լցված սահնակները. նրանք ուզում էին տեսնել քարե վիթխարի կոթողը...* [5, հ. 1, էջ 527]:

- *Дождусь виктории за Дунаем...* [4, т. 2, ст. 12] – *Ես կտեսնեմ հաղթանակը Դանուբի մյուս ափին...* [5, հ. 2, էջ 15]:

Հավելումներ կարող են կատարվել նկարագրության, բացատրության կամ հենց մեկ բառի միջոցով նաև այն դեպքում, երբ բացակայում է բառի հայերեն համարժեքը, կամ սովյալ երևույթը, իրույթը հայ ընթերցողին անձանդ է, օրինակ՝

От этой-то даты и повелось на святой Руси праздновать знаменитый «Татьянин день» - российских студентов [4, т. 1, ст. 73]. – *Այդ տարեթվից էլ սուրբ Ռուսիայում սկսեցին տոնել նշանավոր «Տատյանայի օրը»՝ ռուսական ուսանողների ուրախ օրը* [5, հ. 1, էջ 84]:

Երբ 1755 թվականի հունվարի 23-ին ռուս կայսրուհի Ելիզավետա Պետրովնան հավանություն տվեց Իվան Շուվալովի՝ Մոսկվայում համալսարան բացելու գաղափարին, և ստորագրվեց այդ մասին հրաման, այդ օրը սկսեց նշվել որպես ռուս ուսանողների տոն, որը 19-րդ դարի կեսերին արդեն նշվել է շատ ուրախ և աղմկոտ, ուստի թարգմանիչը, ավելացնելով *ուրախ օր* բառակապակցությունը, ցույց է տալիս, որ «Տատյանայի օրը» ուրախ տոն է եղել, և

այդ կերպ խուսափել է ավելորդ նկարագրություններից՝ ընդամենը ընթերցողներին հաղորդելով տոնի բնույթը:

Թարգմանության գործընթացում հավելումներ կատարելու պատճառներից է թարգմանության ժամանակ նախադասության կառուցվածքի շարահյուսական վերակազմավորումը, որի ժամանակ երբեմն անհրաժեշտ է լինում որոշակի տարրեր ներմուծել նախադասության մեջ [1, էջ 225]: Ռուսերենի դերբայական դարձվածով պարզ նախադասությունները վեպի հայերեն թարգմանության մեջ հաճախ փոխարինվում են ստորադասական նախադասություններով, ինչի հետևանքով հայերեն թարգմանության մեջ ավելանում են շաղապներ, հարաբերական դերանուններ: Այսպես, հետևյալ օրինակներում, նախադասության կառուցվածքի փոփոխությամբ պայմանավորված, կատարվել են շաղկապների, հարաբերական դերանունների հավելումներ.

...сам не съем и жене не дам попробовать [4, т. 1, ст. 118]. – *... ինքս չեմ ուտի և կնոջս էլ չեմ տա, որ համոնես անի* [5, հ. 1, էջ 144]:

Я научу вас принять позу, исполненную внутреннею достоинства... [4, т. 1, ст. 34-35] – *Ես ձեզ կսովորեցնեմ, թե ինչպիսի դիրք ընդունեք, որը տղզորված լինի ներքին արժանապատվությամբ...* [5, հ. 1, էջ 33]:

Одиноким, наблюдал он, как через щели в ставнях сочится яркий свет наступающей весны... [4, т. 1, ст. 265] – *Նա, միայնակ, նայում էր, թե ինչպես վերահաս զարնան պայծառ լույսը ներս է հոսում լուսանոտների փեղկերի արանքներով* [5, հ. 1, էջ 343]:

Թարգմանիչը նաև ստիպված է լինում հավելումներ կատարել, քանի որ առանց դրանց թարգմանության լեզվի օրինաչափությունները կխախտվեն: Այսպես՝ հետևյալ օրինակում եթե նախադասությունը հակադրությամբ չկառուցվեր, հարցը չէր հասկացվի, և թարգմանիչը կատարել է հավելում՝ ռուսերենի *ли-ն* փոխարինելով *թե չէ-ով*.

- *Откуда вам знать – свободно ли моё сердце?..* [4, т. 1, ст. 63] – *Դուք ի՞նչ գիտեք, սիրտս ազա՞տ է, թե չէ...* [5, հ. 1, էջ 70]:

Երբեմն հավելումներ կատարվում են՝ պայմանավորված թարգմանության լեզվի շարադասության առանձնահատկություններով: Կախված ստորադաս բաղադրիչի բնույթից՝ հնարավոր է, որ այն թարգմանության մեջ անմիջապես չհաջորդի այն բառին, որին լրացնում է, ուստի կարիք է լինում, բացի շաղկապից/հարաբերական դերանունից, նաև սովյալ բառը հավելելու, օրինակ՝

До шести часов вечера она играла роль стихийной жертвы, призванной «общенародием» для совершения добра [4, т. 1, ст. 152]. –

Մինչև երեկոյան ժամը վեցը նա տարերային **զոհի** դեր խաղաց, **զոհ, որը** «համաժողովրդյան» կողմից կոչված էր բարիք արարելու [5, հ. 1, էջ 189]:

Բացթողումները ներառում են՝ 1) առանձին ոչ մեծ կարևորություն ունեցող բառի բացթողում, 2) ավելի կարևոր և մեծ միավորների բացթողում, որը կապված է թարգմանչի կողմից տեքստի որևէ մաս չընկալելու հետ, 3) տեքստի մի մասի բացթողում՝ կապված թարգմանության ընթացքում տեքստի կառուցվածքի վերակազմավորման հետ, 4) տեքստի զգալի մասի բացթողում՝ բանախոսի խոսքից թարգմանության հետ մնալու պատճառով [2, էջ 107]: Թարգմանության գործընթացում թարգմանիչներն ամենից հաճախ բաց են թողնում այն բառերը, որոնք իմաստային առումով ավելորդ են, այսինքն՝ արտահայտում են իմաստներ, որոնք կարող են տեքստից հանվել՝ առանց ազդելու վերջինիս վրա [1, էջ 226]: Այդ իմաստները երբեմն հեշտությամբ վերականգնվում են համատեքստում: Այսպես՝ հայերենում դիմավոր բայի դիմաթվային վերջավորությունից հասկանալի է, թե ով է գործողություն կատարողը, ուստի եթե խիստ անհրաժեշտ չէ ընդգծել դերանունով արտահայտված ենթական, թարգմանության մեջ դրանք կարելի է բաց թողնել:

Мы едем на бал к Салтыковым... [4, т. 1, ст. 47] – *Գնում ենք Սալտիկովների մոտ պարահանդեսի...* [5, հ. 1, էջ 49]:

- *Кому надобен я?* [4, т. 1, ст. 266] – *Ու՞մ եմ հարկավոր* [5, հ. 1, էջ 344]:

Մյուս կողմից հաշվի առնելով, որ թարգմանության ընթացքում թարգմանչի կողմից օգտագործվող զանազան լրացումները, բացատրությունները և նկարագրությունները կարող են զգալիորեն մեծացնել տեքստի ծավալը՝ համեմատած բնագրի հետ, թարգմանիչը այս միտումը հավասարակշռելու համար ձգտում է նվազեցնել թարգմանության տեքստի ընդհանուր ծավալը՝ հնարավորության դեպքում թարգմանության լեզվի լեզվատոնական նորմերի սահմաններում բաց թողնելով ավելորդ տարրեր [2, էջ 206]: Հետևյալ օրինակում *ռուբլի* բառը թարգմանելու անհրաժեշտություն չկա, քանի որ հայերենում *միլիոններ վատնել* արտահայտությունը լիովին փոխանցում է բնագրի տեքստի իմաստը:

-... *к чему выбрасывать миллионы рублей на создание гавани в Рогервике...*? [4, т. 1, ст. 246] – ... *ինչու՞ միլիոններ վատնել Ռոգերվիկում նավահանգիստ ստեղծելու վրա...* [5, հ. 1, էջ 318]:

Чаму С каких же пор настолько низко пали итальянские маркизы, что стали продаваться в службу королям германским? [4, т. 2, ст. 339] – *Երբվանի՞ց են այնքան ցածր իջել իտալական մակիզները, որ սկսել են ծախվել գերմանական թագավորներին:* [5, հ. 2, էջ 446] օրինակում

առանց *ծառայություն* բառը թարգմանելու էլ համատեքստից հասկանալի է, որ ծախվելով թագավորներին՝ մարկիզները ծառայելու են նրանց:

Թարգմանության մեջ բացթողումներ կարող են լինել նաև այն դեպքում, երբ դրանք բնագրի լեզվում ձևական միջոցներ են, և դրանց արտահայտումը թարգմանության լեզվում խախտում է վերջինիս նորմերը: Իհարկե յուրաքանչյուր բացթողում պետք է արդարացված լինի, հակառակ դեպքում թարգմանիչը կարող է անցնել թույլատրելիի սահմանը և բաց թողնել այն ամենը, ինչը պարզապես դժվար է թարգմանել կամ անհասկանալի է [3, էջ 28]: Հետևյալ օրինակում թարգմանիչը, բաց թողնելով *доход-ельяныи, хауиыթ* բառի թարգմանությունը, խախտել է բնագրի տեքստի իմաստը, քանի որ բնագրում ասվում է, որ կայսրուհուն հարկավոր էր Ռիգայի մաքսատան եկամուտների մասին տեղեկանք, իսկ թարգմանության մեջ ստացվում է մաքսատան մասին տեղեկանք:

Ей понадобилась справка о доходах с рижской таможи [4, т. 2, ст. 12]. – *Կայսրուհուն հարկավոր էր տեղեկանք Ռիգայի մաքսատան մասին* [5, հ. 2, էջ 15]:

Իսկ հետևյալ օրինակում թարգմանիչը միաժամանակ կատարել է և՛ հավելում, և՛ բացթողում, սակայն բնագրի իմաստը այդքան էլ հաջող չի փոխանցվել. *Великое число помещиков на дорогом содержании учителей, из которых большая часть учить не могут* [4, т. 1, ст. 87]. – *Կարվածատերերի տներում կան թանկ նստող ուսուցիչներ, որոնց մեծ մասը ուսուցիչներ չի կարող* [5, հ. 1, էջ 103]: Բնագրում ասվում է, որ մեծ է կարվածատերերի հաշվին ապրող ուսուցիչների թիվը, մինչդեռ թարգմանության մեջ չի հասկացվում, թե ինչ է նշանակում *թանկ նստող ուսուցիչներ*:

Եզրակացություն

Կարող ենք փաստել, որ թարգմանության գործընթացում կատարվող փոխակերպումներից բացթողումը և հավելումը անխուսափելի են: Որոշ դեպքերում դրանց կիրառությունը կարող է արդարացված չլինել, և թարգմանչի խնդիրն է դառնում որևէ բառի, բառակապակցության հավելում կամ բացթողում կատարել այն դեպքում, երբ դրանք անխուսափելի են կամ կատարվում են կոնկրետ նպատակադրումով: Կարելի է եզրակացնել, որ «Փավորիտ» վեպի հայերեն թարգմանության մեջ թարգմանիչը, աշխատելով ավելի մոտ լինել բնագրին, երբեմն կատարել է անտեղի հավելումներ՝ թերևս այն պատճառով, որ առանց դրանց թարգմանության համատեքստը գուցե հասկանալի չլինի: Այդ է պատճառը, որ վեպի հայերեն թարգմանության մեջ հավելումները ավելի շատ են, քան բացթողումները:

Օգտագործած գրականության ցանկ

1. **Бархударов Л. С.**, Язык и перевод (Вопросы общей и частной теории перевода). – М., «Междунар. отношения». 1975. – 240 с.
2. **Комиссаров В. Н.**, Теория перевода (лингвистические аспекты): Учеб. для ин-тов и фак. иностр. яз. – М., Высш. шк.. 1990. – 253 с.
3. **Левицкая Т. Р., Фитерман А. М.**, Теория и практика перевода с английского языка на русский, изд. литературы на иностранных языках. – М. 1963. – 124 с.
4. **Пикуль В. С.** Фаворит: [О Г.А. Потемкине]. Роман-хроника времен Екатерины II. В 2-х тт. / Валентин Пикуль; [Вступ. ст. Ю.А. Лимонова; Худож. Г.П. Фильчаков]. – Л.: Лениздат, 1984. – Т. 1. – 583 с.; Т. 2. – 550 с.
5. **Պիկուլ Վ.** Ֆավորիտ: Վեպ 2 հտ. / Վ. Պիկուլ; Թարգմ.՝ Վ. Բ. Վարդանյան; Գրախոս.՝ Յու. Ա. Լիմոնով, Գ. Ն. Մոխսեևա; Խմբ.՝ Ս.Մ. Մովսիսյան: – Երևան, «Հայաստան» հրատ., 1989: Հտ. 1, – 773 էջ; Հտ. 2 – 742 էջ:
6. **Քանալյան Ա.** Թարգմանության տեսության հիմունքներ: – Երևան, ԵՊՀ-ի հրատ., 2020: – 162 էջ:

Տժանա/Հանձնվել է՝ 13.02.2025

Քեցենզիրոանա/Գրախոսվել է՝ 17.02.2025

Քրինյա/Ընդունվել է՝ 20.02.2025